# ԼՈՒԾՈՒՄԸ ՄՈՏ Է

Դիտարկեք վեճերի այլընտրանքային լուծումը որպես հատուկ կրթության համապատասխանության վերաբերյալ բողոքները լուծելու միջոց, որը կբավարարի ձեր երեխայի կարիքները 20 օրվա ընթացքում՝ 60 կամ ավելի օրվա փոխարեն:

**Լուծեք խնդիրները և արձագանքեք աշակերտների կարիքներին**

**Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջան**

Կրթության հավասար հնարավորությունների գրասենյակ (EECO)
Attn: ADR - CDE
333 S. Beaudry Avenue, հարկ 17

**Աջակցության համար՝**
Հեռախոս (213) 241-7682
Ֆաքսիմիլե (213) 241-3312
Էլ. փոստ՝ equitycompliance@lausd.net

**Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջան**

# ՎԵՃԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄ (ADR)

**Վեճերի այլընտրանքային լուծում. Կալիֆորնիայի կրթության դեպարտամենտի (CDE) Հատուկ կրթության համապատասխանության վերաբերյալ բողոքները լուծելու արագ ուղի**

# ԿԱՄԱՎՈՐ ԼՈՒԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

## Այլընտրանքային վեճերի լուծում (ADR). Արձագանք CDE-ի Հատուկ կրթության համապատասխանության վերաբերյալ բողոքներին

**ADR (20 օր = Արագ ուղի)**

Շրջանը լրջորեն է վերաբերվում CDE-ին պաշտոնական ներկայացված գրավոր բողոքներին հատուկ կրթության մասին օրենքին չհամապատասխանելու վերաբերյալ:

Շրջանի ADR գործընթացը կոչված է արագացնել հատուկ կրթության համապատասխանության վերաբերյալ բողոքների լուծումներն այնպես, որ բավարարեն աշակերտների կարիքները առաջին իսկ հնարավորության դեպքում:

ADR-ի դեպքում Շրջանը կառաջարկի տասը օրվա ընթացքում լուծել բողոքը և/կամ օժանդակել չեզոք միջնորդի կողմից 20 օրվա ընթացքում օգնության տրամադրմանը: Եթե հարցը բավարար լուծում ստանա, Շրջանը և ծնողը միասին կկազմեն պաշտոնական բողոքի հետ կանչելու մասին փաստաթուղթը:

**CDE (60 օր)**

Ծնողը կարող է շարունակել հատուկ կրթության համապատասխանության բողոքների հետաքննությունը Կալիֆորնիայի կրթության դեպարտամենտի (CDE) հետ ADR-ում ներգրավվելու փոխարեն: Գտածոների և ցանկացած ուղղիչ գործողությունների վերաբերյալ Շրջանի բողոքների հետաքննության պաշտոնական հաշվետվությունը հասանելի կլինի 60-օրյա հետաքննության ավարտից հետո:

**ԲՈՂՈՔԻ ՀԵՏ ԿԱՆՉԵԼԸ ԾՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ (ցանկացած ժամանակ)**

Ծնողը կարող է 60-օրյա հետաքննության ցանկացած ժամանակ հետ կանչել հատուկ կրթության համապատասխանության վերաբերյալ CDE-ին իր բողոքը: Պաշտոնական հետ կանչելը պետք է գրավոր ձևակերպվի և ներկայացվի CDE կամ ԼԱՄԴՇ-ի Կրթության հավասար հնարավորությունների գրասենյակ՝ 333 S. Beaudry Avenue, LA, CA 90017 հասցեյով:

**CDE-ն կոչ է անում շրջաններին և ընտանիքներին ուսումնասիրել տեղական լուծման ընտրանքները: Այնուամենայնիվ, եթե հատուկ կրթության համապատասխանության պաշտոնական բողոք է ներկայացվում CDE-ին, բողոքողը կարող է ընտրել խնդիրների լուծումը արագացված ADR-ի գործընթացի միջոցով կամ շարունակել պաշտոնական 60-օրյա CDE բողոքարկման հետաքննություն: Պաշտոնական բողոքի CDE-ից ծանուցում ստանալուց հետո EECO-ի Շրջանի ներկայացուցիչը կարող է կապվել բողոքողի հետ՝ առաջարկելու ADR-ը, մինչ LAUSD-ը և CDE-ն շարունակում են հետաքննել բողոքը մինչև այն լուծվի և (կամ) փակվի:**

| ADR<br>(Արագ ուղի) | CDE<br>(Մոտ 60 օր լուծվելու համար) |
|---|---|
| **ԼԱՄԴՇ-ը և ծնողը/բողոքողը գտնում են լուծում 1-10 օրվա ընթացքում**<br><br>**Չեզոք միջնորդը, ԼԱՄԴՇ-ը և բողոքողը լուծում են 11-20 օրվա ընթացքում**<br><br>**Լուծում + Հետ կանչելը = Փակում** | **CDE-ն և ԼԱՄԴՇ-ը 60 օրվա ընթացքում հետաքննում են և որոշում, որ ԼԱՄԴՇ-ը**<br><br>⇒ **Օրենքին համապատասխան է = Փակում, կամ**<br><br>⇒ **Օրենքին համապատասխան չէ = CDE-ի կողմից նշանակված ուղղիչ գործողություններ՝ լուծելու հարցը և կարգավորելու ԼԱՄԴՇ-ի օրենքին համապատասխանությունը նշված ժամանակահատվածում:**<br><br>**Շրջանը ներկայացնում է CDE-ին համապատասխանության ապացույցներ**<br><br>**Լուծում + Համապատասխանություն = Փակում** |